



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆ

ք. Երևան, Գ. Նժդեհի 23, հեռ. +(37410) 44-71-13/219/

Գ.Գ.-9-Ե- 43/98/15

13-ը ապրիլի, 2015թ

Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Ենոքյանների, Սևակ
և Արթուր Մկրտչյանների, Արմեն Համբարձումյանի,
Վանիկ Հովհաննիսյանի, Արամ Հովսեփյանի, Արթուր
Մկրտչյանի, Ալեքսան Մնացականյանի, Գագիկ
Գրիգորյանի, Նաիրի Ներսիսյանի, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔ» հասարակական կազմակերպության
և «ԷԿՈԴԱՐ» բնապահպանական հասարակական
կազմակերպության ներկայացուցիչ
պարոն Հայկ Ալումյանին

Հարգելի պարոն Ալումյան

Կից ուղարկում եմ ՀՀ վարչական դատարանի 09.04.2015 թվականին որոշումը՝
հայցադիմումի մի մասի ընդունումը մերժելու, իսկ մյուս մասը վերադարձնելու մասին՝ 8 (ութ)
թերթից, հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ 108 (հարյուրութ) թերթից և մեկ կրիչ:

Հարգանքով՝

ՀՀ վարչական դատարանի դատավոր
Կարեն Զարիկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՎԴ/1049/05/15

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄԻ ՄԻ ՄԱՍԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ, ԻՍԿ ՄՅՈՒՄ ՄԱՍԸ
ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

9-ը ապրիլի, 2015թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը (դատավոր Կարեն Չարիկյան), քննարկելով Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Ենոբյանների, Սևակ և Արթուր Սկրտչյանների, Արմեն Համբարձումյանի, Վանիկ Հովհաննիսյանի, Արամ Հովսեփյանի, Արթուր Սկրտչյանի, Ալեքսան Մնացականյանի, Գագիկ Գրիգորյանի, Նաիրի Ներսիսյանի, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» հասարակական կազմակերպության և «ԷԿՈԴԱՐ» բնապահպանական հասարակական կազմակերպության հայցադիմումի ընդունելության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Յ.

Հայցադիմումի էությունը

Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Ենոբյանները, Սևակ և Արթուր Սկրտչյանները, Արմեն Համբարձումյանը, Վանիկ Հովհաննիսյանը, Արամ Հովսեփյանը, Արթուր Սկրտչյանը, Ալեքսան Մնացականյանը, Գագիկ Գրիգորյանը, Նաիրի Ներսիսյանը, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» հասարակական կազմակերպությունը և «ԷԿՈԴԱՐ» բնապահպանական հասարակական կազմակերպությունը 02.04.2015 թվականին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ՀՀ գիտության ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի՝ հայտնելով, որ ֆիզիկական անձ հայցվորները հանդիսանում են Գնդևազ համայնքի բնակիչներ, իսկ պատասխանողներները ընդունել են մի շարք ակտեր, որոնք առնչվում են ՀՀ Վայոց Ձորի մարզի Անուշարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրին, որը գտնվում է Գնդևազ համայնքի անմիջական հարևանությամբ, և որի նախատեսվող ազդեցությունը տարածվում է այդ համայնքի վրա: Արդյունքում հայցվորները խնդրել են.

1. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի՝ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «Գ.ԵՈԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մշակված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Անուշարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը ճանաչել ոչ իրավաչափ.

2. անվավեր ճանաչել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունը.

3. որպես հետևանք՝ անվավեր ճանաչել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 11.11.2014 թվականի թիվ 188-Ս հրամանը, 12.11.2014 թվականին տրված 26.09.2012 թվականի վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունը, 12.11.2014 թվականին կատարված՝ 26.09.2012 թվականի լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտի փոփոխությունը, «Ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի փոփոխության մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 24.11.2014 թվականի թիվ 286-Ս հրամանը, նշված հրամանի հիման վրա 25.11.2014 թվականին 26.09.2012 թվականի վերաձևակերպված լեռնահատկացման ԼՎ-245 ակտում կատարված փոփոխությունը, ինչպես նաև՝ 29.11.2014 թվականին նույն նախարարի կողմից 26.09.2012 թվականին վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունում կատարված փոփոխությունը:

«Լարչական դատարանի վերլուծությունը»

Հաշվի առնելով հայցապահանջներից առաջին և երկրորդի փոխկապակցվածությունը՝ դատարանը դրանց ընդունելիության հարցին կանոնադաշտնա միասին, իսկ երրորդին՝ առանձին:

1) առաջին և երկրորդ պահանջների ընդունելիության հարցը

Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության ինստիտուտը, հիմնվելով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված՝ դատական պաշտպանության արդյունավետ և արդար միջոցների իրավունքների հայեցակարգի վրա, թույլ է տալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց վարչադատական կարգով բողոքարկելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը միայն այն դեպքում, երբ դրանով տեղի է ունեցել վերջինիս իրավունքի կամ ազատության միջամտություն: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով ֆիզիկական ու իրավաբանական անձանց դատարան դիմելու իրավունքը, նախատեսում է պայման. եթե նրանք համարում են, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Այսինքն, անձն իրավասու է վարչական դատարանում վիճարկելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի այն ակտը, որը նրա համար առաջացրել է բացասական իրավական հետևանք: Ընդ որում, նշված ակտը պետք է լինի որոշակի, այն է՝ վարչական կամ ռեալ (գործողություն, անգործություն): Այսպիսով, վարչական դատավարության կարգով բողոքարկման են ենթակա միայն հայցվորի իրավունքին կամ ազատությանը միջամտող վարչական մարմինների ակտերը:

Միաժամանակ օրենսդիրը վարչադատական վերահսկողության ենթակա վարչական մարմինների իրավական գործունեությունը որոշակիացրել է հստակ ընթացակարգային կանոններով, տարանջատելով տվյալ գործունեության տեսակը քրեական դատավարության ընթացքում և քաղաքացիական հարաբերություններում իրականացվող գործողություններից: Մասնավորապես, «Լարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ (ընդունվել է 2014 թվականի փետրվարի 14-ին, ուժի մեջ է մտել նույն թվականի դեկտեմբերի 31-ին) օրենսդիրը հստակ սահմանել է վարչական մարմինների այն գործունեության տեսակը, որի ընթացքում վարչական մարմինները միջամտում են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներին ու ազատություններին և որը չի առնչվում քրեական և քաղաքացիական իրավահարաբերություններին:

Այսպես, նախ նշված օրենքի 3-րդ մասը թվարկում է այն մարմիններին, որոնք հանդիսանում են վարչական (ինստիտուցիոնալ առումով դրանք պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են (1-ին կետ)), և բնութագրում է «վարչարարություն» եզրույթը որպես «վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է



փաստական հետևանքներ» (2-րդ կետ): Հաջորդիվ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասում տրված է վարչական ակտի հասկացությունը հետևյալ կերպ. «վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն»: Ընդ որում, օրենքը հաջորդաբար սահմանում է վարչարարության հիմնարար սկզբունքներն (2-րդ գլուխ) ու վարչական ակտի ընդունմանն ուղղված վարույթային կանոնները (բաժիններ II և III), վարչական ակտի, գործողության ու անգործության բողոքարկման ընթացակարգը (բաժին IV), վարչական ակտի հարկադիր կատարման կարգը (բաժին V), վարչական ծախսերի և վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունները (բաժիններ VI-VII):

Փաստորեն, այս օրենքը ձևական (ֆորմալ) կարգավորման է ենթարկում ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ մի կողմից, և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների՝ մյուս կողմից, փոխհարաբերությունների այն ոլորտը, որը կարգավորված չէ մասնավոր իրավունքին վերաբերող օրենսդրությամբ և որտեղ հանրային շահի պահպանման նկատառումով գործում են հատուկ կարգավորումներ (հանրային իրավունք), միաժամանակ տվյալ բնագավառից դուրս թողնելով քրեաիրավական հարաբերությունները, որոնք կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Նման պայմաններում պարզ է դառնում, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածում տեղ գտած «վարչական ակտ», «գործողություն» և «անգործություն» հասկացությունները ինքնավար չեն և նույնական են վարչարարության («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով) արդյունք հանդիսացող ակտերի հետ (վարչական ակտ, գործողություն, անգործություն):

Վերագրյալից հետևում է, որ վարչական մարմինների գործունեության ոչ բոլոր արդյունքներն են հանդիսանում վարչարարության արդյունք (վարչական կամ ռեալ ակտ) և, ըստ այդմ, դրանցից ոչ բոլորն են ինքնուրույն առաջացնում անձանց համար իրավական հետևանքներ: Վարչական մարմիններն իրենց գործունեության ընթացքում կարող են ստեղծել մի շարք փաստաթղթեր կամ իրականացնել ֆիզիկական գործողություններ, որոնք, սակայն, չհանդիսանալով վարչարարության արդյունք, ինքնին չեն միջամտում անձանց իրավունքներին ու ազատություններին: Դրանք, թեև, կարող են հետագայում հիմք հանդիսանալ անձի համար իրավական հետևանքներ առաջացնելուն, սակայն քանի դեռ չեն դրվել որևէ վարչական կամ ռեալ ակտի հիմքում, չեն հանդիսանում իրավական հետևանքներ առաջացնող (օրինակ՝ վարչական վարույթի ապացույց հանդիսացող՝ վարչական մարմնի ստեղծած որևէ փաստաթուղթ կամ վարչական վարույթի վերաբերյալ ծանուցմանն ուղղված որևէ գործողություն): Ուստի նման փաստաթղթերը կամ գործողությունները ենթակա չեն ինքնուրույն վիճարկման: Դրանց իրավաչափության հարցը կարող է վարչադատական վերահսկողության առարկա դառնալ բացառապես վերջնական ակտի իրավաչափության ստուգման շրջանակներում:

Տվյալ պարագայում ներկայացված հայցի առաջին և երկրորդ պահանջներով վիճարկվում են 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «ԳԵՈԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մշակված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալու ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի գործողությունը և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունը: Նման պայմաններում դատարանը հարկ է համարում բննարկել վիճարկվող գործողության և եզրակացության իրավական բնույթը, որպեսզի հնարավոր լինի պարզել այն հարցը, թե դրանք արդյոք ուղղակիորեն միջամտում են հայցվորների որևէ իրավունքին կամ ազատությանը:

ա/ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «ԳԵՈԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մշակված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալու ՀՀ գիտությունների ազգային



սկադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի գործողության իրավական բնույթը

Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները սահմանված են «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով, որի 5-րդ գլուխը նվիրված է Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի իրավական կարգավիճակի հետ կապված հարցերի կարգավորմանը: Այսպես, նշված օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է.

«1. Համալիր և Տարեկան ծրագրերի (հաշվետվությունների), ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող լիազորված մարմինների մշակած փաստաթղթերի անկախ և մասնագիտական փորձաքննության նպատակով Հայաստանի Հանրապետության գյուտությունների ազգային սկադեմիայի (այսուհետ՝ ԳԱԱ) կառուցվածքում ստեղծվում է ստորաբաժանում՝ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հանձնաժողովը կազմված է 9 անդամից, որոնց նշանակում է ԳԱԱ նախագահը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Գեղարքունիքի մարզպետի լիազորված անձը:

3. Հանձնաժողովի նախագահն ընտրվում է Հանձնաժողովի անդամների կազմից, գաղտնի քվեարկությամբ՝ Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4. Հանձնաժողովի կազմում փոփոխություններ կարող է կատարել ԳԱԱ նախագահը:

5. Հանձնաժողովը գործում է իր կանոնադրությանը համապատասխան, որը, Հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, հաստատում է ԳԱԱ նախագահությունը՝ Հանձնաժողովի ստեղծման օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

6. Հանձնաժողովի գործունեության ծախսերի ֆինանսավորումը, այդ թվում՝ Հանձնաժողովի անդամների վարձատրությունը, իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին և արտացոլվում ԳԱԱ պահպանման ծախսերում:»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է հանձնաժողովի իրավասությունը, որոնք հետևյալն են.

ա) իրականացնում է Համալիր և Տարեկան ծրագրերի (հաշվետվությունների), ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող փաստաթղթերի նախնական և ամփոփիչ փորձաքննություններ և տալիս է եզրակացություններ.

բ) նախնական փորձաքննության արդյունքների հիման վրա մշակում և լիազորված մարմիններ է ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

գ) կարող է մասնակցել Սևանա լճի հետ կապված միջոցառումներին և հարցերի բննարկմանը.

դ) իրականացնում է գիտական և փորձագիտական հետազոտություններ, կազմում արձանագրություններ.

ե) կարող է ներգրավել լրացուցիչ մասնագետներ.

զ) իրականացնում է Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված և օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

Իսկ օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունների իրավական կարգավիճակը հետևյալ կերպ.

«1. Հանձնաժողովը փորձագիտական եզրակացություն է տալիս Համալիր և Տարեկան ծրագրերի (հաշվետվությունների), ինչպես նաև դրանց իրականացումն ապահովելու նպատակով մշակված փաստաթղթերի վերաբերյալ՝ դրանց ստացման օրվանից՝ մեկամսյա ժամկետում:

(...)

3. Համալիր և Տարեկան ծրագրերի (հաշվետվությունների) վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը ներառում է՝



- ա) ծրագրային խնդիրների և միջոցառումների հիմնավորվածության աստիճանը.
- բ) ծրագրային խնդիրների և միջոցառումների ռեսուրսային, այդ թվում՝ ֆինանսական ապահովվածության գնահատականը.
- գ) սույն օրենքի պահանջներին ծրագրերի (հաշվետվությունների) համապատասխանության գնահատականը.
- դ) ծրագրերի (հաշվետվությունների) մշակման և քննարկման ընթացքում ստացված, ինչպես նաև նախնական փորձաքննության արդյունքում իր ներկայացրած առաջարկությունները ծրագրերում (հաշվետվություններում) ընդգրկելու կամ մերժելու մասին տեղեկանքը.
- ե) ծրագրերի մշակվածության և իրատեսության վերաբերյալ ամփոփ գնահատականը.
- զ) այլ տեղեկություններ և վերլուծություններ, որոնք Հանձնաժողովն անհրաժեշտ կհամարի ծրագրերի (հաշվետվությունների) վերաբերյալ լիարժեք փորձագիտական եզրակացություն ներկայացնելու համար:

(...):»:

Վերոգրյալից հետևում է, որ Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի պահպանման նպատակով օրենսդիրը որոշել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կառուցվածքում ստեղծել մասնագիտական հանձնաժողով, որը Սևանա լճի վրա որոշակի ազդեցություն ունեցող գործունեությունների մախազմման շրջանակներում պետք է արտահայտի իր դիրքորոշումը: Այսինքն՝ հանձնաժողովի անդամները, հանդիսանալով համապատասխան բնագավառի գիտելիքներին տիրապետող անձինք, իրավասու մարմինների կողմից որոշակի հարց քննարկելիս իրենց կարծիքն են արտահայտում այն փաստական հանգամանքների վերաբերյալ, որոնք առնչվում են Սևանա լճի ներգործության խնդրին:

բ/ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացության իրավական բնույթը

Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը սահմանող, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորող մայր փաստաթուղթը՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը, կանոնակարգում է նաև ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում փորձաքննության անցկացումը: Այսպես, նշված օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասը թվարկում է ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացվող փորձաքննությունները, որոնց շարքում է նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության տեսակը (կետ 2): Իսկ նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության կատարման կարգը սահմանվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Միաժամանակ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն. «ընդերքօգտագործման իրավունքը տրամադրում է լիազոր մարմինը՝ սույն օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով՝ ընդերքօգտագործման թույլտվության կամ համաձայնության, լեռնահատկացման ակտի, ինչպես նաև ընդերքօգտագործողի հետ ընդերքօգտագործման պայմանագրի կնքման միջոցով»: Սակայն օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասով արգելվում է օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի: Օրենսգրքի 51-րդ հոդվածն, իր հերթին, սահմանում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացման կարգը, որը մասնավորապես պարունամում է հետևյալ կանոնները.

- օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, լիազոր մարմինը



չրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը՝ կից փաստաթղթերով և պետական տուրքի անդորրագրով, ներկայացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության (մաս 3).

- շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունն ստանալուց հետո՝ մինչև 100-օրյա ժամկետում, տրամադրում է համապատասխան փորձաքննական եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ (մաս 4).

- փորձաքննական դրական եզրակացություններն ստանալուց հետո լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո՝ մինչև 180-օրյա ժամկետում, որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին (մաս 8).

- օգտակար հանաժողի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է (մաս 14):

Վերոգրյալից հետևում է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը նշանակվում է լիազոր մարմնի կողմից օգտակար հանաժողի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման հայտի հիմնավորվածությունը ստուգելու և դրա վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով: Նկատի ունենալով, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության հարցը հատուկ մասնագիտական գիտելիքներ է պահանջում, իրավասու մարմինը ընդերք-օգտագործման իրավունք տրամադրելու հարցը որոշում է հաշվի առնելով մասնագետների կարծիքը:

գ/ վարչական դատարանի եզրակացությունը

Վերոգրյալի հիման վրա դատարանն արձանագրում է, որ թե՛ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կարծիքը՝ որոշակի գործունեության՝ Սևանա լճի վրա ազդեցության վերաբերյալ, թե՛ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությունը հանդիսանում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի իմաստով փորձագետի եզրակացություն, որն էլ, իր հերթին, նույն օրենքի 42-րդ հոդվածով համարվում է վարչական վարույթում ապացույց: Իսկ վարչական վարույթի ապացույցն ինքնին որևէ իրավական հետևանք չի առաջացնում անձանց համար: Վարչական մարմինը, ըստ նշված օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, պարտավոր է հետազոտել գործում առկա բոլոր ապացույցները բազմակողմանիորեն և վարչական ակտ ընդունելիս հաշվի առնել, թե ինչ փաստական հանգամանքներ են հաստատվում տվյալ ապացույցներով:

Նման պայմաններում պարզ է դառնում, որ վիճարկվող ակտերով անձանց իրավունքի որևէ միջամտություն տեղի չի ունեցել, քանի որ դրանցով չի որոշվել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման հարցը: Ուստի հայցվորները դրանք վիճարկելու իրավական խնդիր չունեն, քանի որ վարչական վարույթի ապացույցների գնահատման հարցը քննարկման է ենթակա վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտերի իրավաչափության ստուգման շրջանակներում:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ ներկայացված հայցը՝ տվյալ մասով, ենթակա չէ դատարանում քննության, որպիսի հանգամանքը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հիմք է հայցադիմումի տվյալ մասի ընդունումը մերժելու համար:

2) երրորդ պահանջի ընդունելիության հարցը

Նախ՝ հաշվի առնելով այն, որ տվյալ պահանջը ձևակերպված է որպես առաջին երկու պահանջների հետևանք, որոնց ընդունումը ենթակա է մերժման, դատարանը, առանց արդյունքով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, առաջարկում է տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները:

Երկրորդ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածը սահմանում է հայց ներկայացնելու ժամկետները: Մասնավորապես նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի



համաձայն վիճարկման հայքը վարչական դատարան կարող է ներկայացվել երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

Տվյալ պարագայում հայցվորների կողմից վիճարկվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 11.11.2014 թվականի թիվ 188-Ա հրամանը, 12.11.2014 թվականին տրված 26.09.2012 թվականի վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունը, 12.11.2014 թվականին կատարված՝ 26.09.2012 թվականի լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտի փոփոխությունը, «Ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի փոփոխության մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 24.11.2014 թվականի թիվ 286-Ա հրամանը, նշված հրամանի հիման վրա 25.11.2014 թվականին 26.09.2012 թվականի վերաձևակերպված լեռնահատկացման ԼՎ-245 ակտում կատարված փոփոխությունը, ինչպես նաև՝ 29.11.2014 թվականին նույն նախարարի կողմից 26.09.2012 թվականին վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունում կատարված փոփոխությունը, մինչդեռ հայցադիմումը ՀՀ վարչական դատարան է ներկայացվել 02.04.2015 թվականին, և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին:

Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ հայցադիմումը ենթակա է վերադարձման, եթե լրացել է հայցադիմում ներկայացնելու համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետը, և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին:

Երրորդ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը, կամ մման միջնորդությունը մերժվել է:

Տվյալ պարագայում հայցադիմումին կից բացակայում է օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը կամ պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու մասին միջնորդությունը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերով, 79-80-րդ հոդվածներով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածով, վարչական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի՝ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «ԳԵՈԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մշակված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Անույսարի ոսկեքեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը ոչ իրավաչափ ճանաչելու և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունը անվավեր ճանաչելու պահանջների մատով Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Ենոքյանների, Սևակ և Արթուր Սկրտչյանների, Արմեն Համբարձումյանի, Վանիկ Հովհաննիսյանի, Արամ Հովսեփյանի, Արթուր Սկրտչյանի, Ալեքսան Մնացականյանի, Գագիկ Գրիգորյանի, Նաիրի Ներսիսյանի, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» հասարակական կազմակերպության և «ԷԿՈԳԱՐ» բնապահպանական հասարակական կազմակերպության 02.04.2015 թվականին ներկայացրած հայցադիմումի ընդունումը մերժել:

2. Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Ենոքյանների, Սևակ և Արթուր Սկրտչյանների, Արմեն Համբարձումյանի, Վանիկ Հովհաննիսյանի, Արամ Հովսեփյանի, Արթուր Սկրտչյանի, Ալեքսան Մնացականյանի, Գագիկ Գրիգորյանի, Նաիրի Ներսիսյանի, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» հասարակական կազմակերպության և «ԷԿՈԳԱՐ» բնապահպանական հասարակական կազմակերպության 02.04.2015 թվականին ներկայացրած հայցադիմումի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 11.11.2014 թվականի թիվ 188-Ա հրամանը, 12.11.2014 թվականին տրված 26.09.2012 թվականի վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունը, 12.11.2014 թվականին կատարված՝ 26.09.2012 թվականի լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտի փոփոխությունը, «Ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության



ժամկետի փոփոխության մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 24.11.2014 թվականի թիվ 286-Ա հրամանը, նշված հրամանի հիման վրա 25.11.2014 թվականին 26.09.2012 թվականի վերաձևակերպված լեռնահատկացման ԼՎ-245 ակտում կատարված փոփոխությունը, ինչպես նաև՝ 29.11.2014 թվականին նույն նախարարի կողմից 26.09.2012 թվականին վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունում կատարված փոփոխությունը անվավեր ճանաչելու պահանջների մասով, վերադարձնել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի և 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ կետերի համաձայն սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալուց 5 օր հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

ԴԱՏԱՎՈՐ



ՎԱՐՉԱԿԱՆ ԶԱՐԻԿՅԱՆ